"НАЦИОНАЛЬНЫЙ АКАДЕМИЧЕСКИЙ ТЕАТР
ОПЕРЫ И БАЛЕТА им. А.СПЕНДИАРЯНА"
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ

ALEXANDER SPENDIARIAN OPERA AND BALLET
NATIONAL ACADEMIC THEATRE,
NON-COMMERCIAL STATE ORGANIZATION

«Ա.ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՐԱՄԱՆ

N 500-Լ

«12» սեպտեմբերի 2019 թ.
ք. Երևան

«Ա. ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲԱԼԵՏԱՅԻՆ ԽՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՓՈՐՁԱՎԱՐԻ ՀԱՍՏԻՔԸ ԿՐՃԱՏԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի N 50-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Թատրոն) բալետային խմբի ղեկավար-գլխավոր փորձավարի, գլխավոր բալետմայստերի, ինչպես նաև բալետային խմբի տեսուչների և փորձավարների գործառույթները կրկնվում են, ինչի արդյունքում խանգարվում է բալետային խմբի աշխատանքի արդյունավետ կազմակերպումը, հանգեցնում կոնֆլիկտային տարբեր իրավիճակների, որոնք բացասաբար են անդրադառնում նաև բալետային խմբի առողջ մթնոլորտի, ներկայացումների որակի, ինչպես նաև ընդհանուր աշխատանքի արդյունքի վրա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարի 2007 թվականի դեկտեմբերի 3-ի N 778-Ա հրամանով հաստատված Թատրոնի կանոնադրության 61-րդ կետի է) և ը) ենթակետերի պահանջներով՝

հրամայում եմ.

1. Կրճատել Թատրոնի բալետային խմբի ղեկավար-գլխավոր փորձավարի հաստիքը:

2. Թատրոնի տնօրենի 2018 թվականի հունվարի 19-ի ««Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության 2018 թվականի կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու մասին» N 50-Ա հրամանում կատարել հետևյալ փոփոխությունը.

հրամանով հաստատված N 1 և N 2 հավելվածների.

1)10.4 բաժիններից հանել 2-րդ «Բալետային խմբի ղեկավար-գլխավոր փորձավար, 1 հաստիքային միավոր» տողերը:

3. Թատրոնի մարքեթինգի և ՓիԱր բաժնին՝ սույն հրամանը հրապարակել Թատրոնի պաշտոնական ինտերնետային կայքէջում առանձին բաժնում՝ նշելով ակտի հրապարակման օրը:

4. Թատրոնի անձնակազմի կառավարման բաժնին՝ ապահովել սույն հրամանի իրազեկումը համապատասխան անձանց:

Հիմք՝ Թատրոնի գլխավոր բալետմայստեր, ՀՀ ժողովրդական արտիստ Վ. Գալստյանի 2019 թվականի սեպտեմբերի 2-ի Զ-437 և 2019 թվականի սեպտեմբերի 11-ի Զ-454 զեկուցագրերը, Թատրոնի բալետային խմբի ղեկավար-գլխավոր փորձավար Ա. Գրիգորյանի 2019 թվականի սեպտեմբերի 5-ի Զ-446 զեկուցագիրը, Թատրոնի բալետային խմբի տեսուչ Ժ. Թամիզյանի 2019 թվականի սեպտեմբերի 9-ի Դ-330 և 2019 թվականի սեպտեմբերի 11-ի Դ-342 բացատրագրերը:

Թատրոնի տնօրենի
ժամանակավոր պաշտոնակատար՝ **Կ. Կիրակոսյան**

ք. Երևան
«12» սեպտեմբերի 2019 թ.